Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
ապրիլի 22-ի նիստի N 17
արձանագրային որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստների 2014թ. համալրման և ծախսման վերաբերյալ

1. <<Թանկարժեք մետաղների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N737-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալության կանոնադրության (այսուհետև Պետական գանձարանի կանոնադրություն) համաձայն, պետական գանձարանի պահուստների ձևավորման և համալրման հիմնական աղբյուրներն են՝

1) պետական բյուջեի միջոցների հաշվին ներքին և արտաքին շուկաներից ձեռք բերված թանկարժեք մետաղներով և թանկարժեք քարերով, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերով,

2) օրենքով սահմանված կարգով բռնագրավված, հօգուտ պետության տիրազուրկ ճանաչված, ժառանգության իրավունքով կամ նվիրատվությամբ պետությանն անցած թանկարժեք մետաղներով, թանկարժեք քարերով, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերով,

3) թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հազվագյուտ բնակտորներով և գանձերով,

4) պետական պաշտոնատար անձանց կողմից ի պաշտոնե ստացած թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված նվերներով,

5) պետական հիմնարկների ու կազմակերպությունների գույքի վերանորոգումից, դուրսգրումից և օտարումից գոյացած թանկարժեք մետաղների ջարդոնի ու թափոնի ընդունման, դրանց վերամշակման, զտման կազմակերպմամբ և արտադրված թանկարժեք մետաղների Հայաստանի Հանրապետության պետական պահուստներում հաշվեգրմամբ,

6) օրենքով սահմանված կարգով բնակչությունից թանկարժեք մետաղների, ինչպես նաև դրանցից պատրաստված իրերի ջարդոնների, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի

հազվագյուտ բնակտորների, թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված բարձր գեղարվեստական պատմամշակութային արժեք ներկայացնող իրերի գնումների կազմակերպմամբ և իրականացմամբ,

7) այլ հիմքերով պետության սեփականությանն անցած թանկարժեք մետաղներով, թանկարժեք քարերով, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերով:

2. Պետական գանձարանի կողմից 2014թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի N 484-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն կատարվել են թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ընդունման թվով 2 և բաց թողնման թվով 1 գործարք, որի արդյունքում պետական պահուստները համալրվել են՝ 1354 հատ՝ 4445.65 գրամ ընդհանուր քաշով արծաթյա իրերով, 253.3 գրամ պլատինով, 1177.4 գրամ արհեստական քարերով: Երևանի Ոսկերչական գործարան-1 <<Գնոմոն>> ԲԲԸ-ին վերամշակման համար հանձնվել է 6155.35 գրամ թանկարժեք մետաղներ պարունակող համաձուլվածք, որի վերամշակման արդյունքում Պետական գանձարան ետ է վերադարձվել 1251.8 գրամ պալադիում, իսկ 4598.3 գրամ արծաթը վաճառվել է Երևանի Ոսկերչական գործարան-1 <<Գնոմոն>> ԲԲԸ-ին: Արդյունքում Պետբյուջեի <<Մուտքեր թանկարժեք մետաղների իրացումից>> հաշվին մուտքագրվել է 1.319.200 (մեկ միլիոն երեք հարյուր տասնինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

Փաստորեն, Հայաստանի Հանրապետության թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական պահուստը համալրվել է <<Թանկարժեք մետաղների մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի միայն բ) կետի հիմքով: Այլ աղբյուրներից համալրում տեղի չի ունեցել:

3. <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալությունը՝ առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 5-ի N 484-Ն որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի պահանջներով գնահատել է Պետական գանձարանում գտնվող թանկարժեք մետաղները՝ տվյալ պահին միջազգային շուկայում գործող գներին համապատասխան:

4. Պետական գանձարանում գտնվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, ինչպես նաև դրանցից պատրաստված իրերի արժեքը 01.01.2015թ. դրությամբ կազմել է 1.502.005.453 դրամ (տես՝ կից աղյուսակ 1): Մետաղների հաշվարկի համար հիմք է ընդունվել 12.01.2015-18.01.2015թթ. Պետական գանձարանի կողմից սահմանված պետական ստանդարտին համապատասխան ձուլակտորի համար մեկ գրամ քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների բացթողնման գները՝ արտահայտված ՀՀ դրամով:

5. Պետական գանձարանում գտնվող թանկարժեք մետաղների արժեքները 01.01.2015թ. դրությամբ կազմել են՝ ոսկի՝ 261.6 մլն. դրամ, արծաթ՝ 4.8 մլն. դրամ, պլատին՝ 56.1 մլն.դրամ, պալադիում՝ 13.2 մլն. դրամ:

Կից ներկայացվում է 01.01.2015թ. դրությամբ Պետական գանձարանում գտնվող թանկարժեք մետաղների գների դինամիկան գրաֆիկ 1-ի տեսքով:

6. Հայաստանի Հանրապետության <<Թանկարժեք մետաղների մասին>> օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալությունն է լիազորված իրականացնելու պետական սեփականություն հանդիսացող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, ինչպես նաև թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված իրերի (բացառության Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հաշվեկշռում գտնվող արժեքների) հաշվառումը և կառավարումը:

7. Պետական գանձարանի կանոնադրության 8-րդ կետի <<զ>> ենթակետի համաձայն, սահմանված կարգով և ժամկետներում իրականացվել է պետական պահուստների մաս կազմող արժեքների գույքագրում և Պետական գանձարանին տեղեկատվության տրամադրում միջոցառումը, որի արդյունքում Պետական գանձարանը հստակեցրել է պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց (բացառությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող միջնակարգ հանրակրթական դպրոցների) հաշվեկշիռներում հաշվառված արժեքների առկայության, շարժի, որակական վիճակի, գույքագրումների և պահպանման պայմանների մասին տվյալները: Ստացված տեղեկությունները ճշգրտվել և մուտքագրվել են համապատասխան էլեկտրոնային բազա:

Արդյունքում կատարվել է ազգային հարստության գույքագրում և պետական պահուստի իրական չափի գնահատում:

8. Պետական գանձարան տեղեկատվություն է ներկայացրել թվով 85 կազմակերպություններ, որոնց հաշվեկշիռներում հաշվառված են թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր և դրանցից պատրաստված իրեր:

9. Պետական գանձարանի կողմից պետական հիմնարկների հաշվեկշիռներում գտնվող արժեքները տարանջատվել և դասակարգվել են ըստ պետական պահուստի արժեքների և ազգային պահուստի արժեքների:

10. Պետական գանձարանի կողմից հաշվառվել են Հայաստանի Հանրապետության թանգարաններում առկա ազգային պահուստի հետևյալ արժեքները՝ ոսկի 64,3 կգ (տես՝ կից աղյուսակ 2), արծաթ 1470,4 կգ (տես՝ կից աղյուսակ 2), պլատին 0,5 կգ (տես՝ կից աղյուսակ 2) և պալադիում 0.03 գրամ, իրեր՝ այլ թանկարժեք մետաղների համաձուլվածքից 178,7կգ (տես՝ կից աղյուսակ 2):

11. Պետական գանձարանի կողմից հաշվառվել են Պետական մարմինների, պետական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ իրավաբանական անձանց հաշվեկշիռներում առկա պետական պահուստի հետևյալ արժեքները՝ ոսկի 1,2 կգ, (տես՝ կից աղյուսակ 3), արծաթ 17,3 կգ, (տես՝ կից աղյուսակ 3), պլատին 64,9 կգ (տես՝ կից աղյուսակ 3), պալադիում 0,3 կգ (տես՝ կից աղյուսակ 3), իրիդիում

10,9 կգ (տես՝ կից աղյուսակ 3), ռոդիում 0,2 կգ (տես՝ կից աղյուսակ 3), օսմիում 2.2 գրամ (տես՝ կից աղյուսակ 3):

Հաշվառվել են նաև սարքավորումների մեջ՝ ոսկի 4,4 կգ (տես՝ կից աղյուսակ 3), արծաթ 479,3 կգ (տես՝ կից աղյուսակ 3), պլատին 3,5 կգ (տես՝ կից աղյուսակ 3), պալադիում 9,3 կգ (տես՝ կից աղյուսակ 3), ռոդիում 0,1 կգ (տես՝ կից աղյուսակ 3), թանկարժեք մետաղների համաձուլվածք 1,2 կգ (տես՝ կից աղյուսակ 3), իրիդիում 0.03 գրամ (տես՝ կից աղյուսակ 3):

ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ ՀՊՃՀ) 18.07.2012թ. հ.02/13/1453-12 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության <<Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան>> գործակալությանը տեղեկացրել է այն մասին, որ իրականացվել է ՀՊՃՀ-ի թանկարժեք մետաղների պահոցում առկա, թանկարժեք մետաղներ պարունակող ռադիոդետալների, հանգույցների, տպասալիկների վաճառք՝ Երևանի <<Ադամանդ>> ապրանքահումքային բորսայի միջոցով, հետևյալ հաշվարկային պարունակությամբ՝ ոսկի - 491.890314գր., արծաթ - 15189.21318գր., պլատին-28.69527գր., պալադիում-176.59189գր.:

ՀՀ կառավարության 13.05.2010թ. N 654-Ն որոշման համաձայն ՀՊՃՀ-ի տնօրինության թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը և դրանցից պատրաստված իրերն ամրացվել է ՀՊՃՀ-ին՝ անհատույց օգտագործման իրավունքով:

Միևնույն որոշմամբ առաջարկվել է ՀՀ կրթության և գիտության նախարարին որոշումն ուժի *մեջ* մտնելուց հետո եռամսյա ժամկետում ՀՊՃՀ-ին սեփականության իրավունքով հանձնված գույքի կազմից հանել թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը և դրանցից պատրաստված իրերը և դրանք ներառել անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմում:

ՀՀ կառավարության 02.05.2003թ. N 737-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության կանոնադրության 8-րդ կետի ե) ենթակետի համաձայն գործակալության գործառույթներից է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և չափով թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և դրանցից պատրաստված իրերի՝ պետական պահուստներից բացթողումը, բաց թողնված արժեքների դիմաց վճարումների գանձումը և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային մաս մուտքագրումը:

Արդյունքում առանց ՀՀ կառավարության համապատասխան որոշման ՀՊՃՀ ՊՈԱԿ-ը վաճառել է պետական սեփականություն հանդիսացող թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը:

ՀՊՃՀ ՊՈԱԿ-ին ամրացված գույքի վաճառքին վերաբերող գրագրությունների հետագա ընթացքը լուծելու նպատակով դրանք տրամադրվել են ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

12. Հաշվառվել են պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառված մեդալները՝ ոսկի 1,5 կգ (տես՝ կից աղյուսակ 4), արծաթ 47,8 կգ (տես՝ կից աղյուսակ 4):

13. Հայաստանի Հանրապետությանն է վերապահվել նշված արժեքների նկատմամբ սեփականության իրավունքը, իսկ պետական ոչ առևտրային կազմակերպություններին արժեքները տրամադրվել են միայն տիրապետման և նպատակային օգտագործման իրավունքով:

14. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1901-Ն որոշման համաձայն սահմանվել և հրապարակվել է Պետական գանձարան գործակալության կողմից հաստատվող Լոնդոնի մետաղների բորսայի տվյալների հիման վրա մատակարարման ամսվա համար հայտարարված՝ գները:

15. Պետական գանձարանի կանոնադրության 8-րդ կետի <<ժ>> ենթակետի համաձայն, սահմանված կարգով սահմանվել և հրապարակվել է թանկարժեք մետաղների (ոսկի, արծաթ, պլատին, պալադիում, ռոդիում, իրիդիում) գնման և բացթողնման գները:

Կից ներկայացվում են 2014թ. ընթացքում Պետական գանձարանի կողմից սահմանված պետական ստանդարտին համապատասխան ձուլակտորի համար մեկ գրամ քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների բացթողնման գների դինամիկան գրաֆիկ 2, 3, 4, 5-ի տեսքով: